Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 5-րդ մասի 1-ին պարբերության, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշումը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 219-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) եկամուտներն ավելացնել 3.144.870 (երեք միլիոն հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամով ,այդ թվում՝

ա. այլ եկամուտներ՝ 2.094.870 (երկու միլիոն իննսունչորս հազար ութ հարյուր յոթանասուն) բ. այլ ընթացիկ դրամաշնորհներ՝ 1.050.000 (մեկ միլիոն հիսուն հազար),

2) բյուջեի ծախսերն ավելացնել 3.144.870 (երեք միլիոն հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամով՝ 1/1/1 գործառական դասակարգման (4111) «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածը՝ 3.006.950 (երեք միլիոնվեց հազար ինը հարյուր հիսուն), (4269) «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածը՝ 137.920 (մեկ հարյուր երեսունյոթ հազար ինը հարյուր քսան),

3)հաստատել բյուջեի՝

ա. եկամուտները՝ 3.180.516.370 (երեք միլիարդ հարյուր ութսուն միլիոն հինգ հարյուր տասնվեց հազար երեք հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. ծախսերը՝ 3.252.770.170 (երեք միլիարդ երկու հարյուր հիսուներկու միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Բյուջեի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1,2,3,4 հավելվածների:

3. Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 93.887.500 (իննսուներեք միլիոն ութ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս:

4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Ռ .ՄԱՆՈՅԱՆ

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

Լ. ՋԻԼԱՎՅԱՆ

Կատարող՝Հ.Աբիսողոմյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ - ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման կատարման անհրաժեշտությամբ՝ կապված Գյումրի համայնքի վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման հետ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 5-ի N 461-Ն որոշման կատարման անհրաժեշտությամբ՝ կապված ՀՀ Շիրակի մարզում այլընտրանքային աշխատանքային ծառայության անցած ՀՀ քաղաքացիներին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրամական բավարարման և փոխհատուցումների տրամադրման հետ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 219-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություններ նախատեսվում են՝ Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի

1) եկամուտներն ավելանալու են 3.144.870 (երեք միլիոն հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամով,

2) ծախսերն ավելանալու են 3.144.870 (երեք միլիոն հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամով,

3) վարչական մասի պահուստային ֆոնդի 93.887.500 (իննսուներեք միլիոն ութ հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղվելու են ֆոնդային մաս: